# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

# Հ Ր Ա Մ Ա Ն

« 23 » **օգոստոսի** 2021**թ.**

№ 637-**ՀՆ**

## «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՄԱՆՐԱԾԱԽ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների 28-րդ կետը՝ **հրամայում եմ.**

1. Ընկերության կողմից 2021 թվականի օգոստոսի 9-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման հայտի ուսումնասիրության շրջանակում իրականացնել նշված սակագների հաշվարկներում ներառվող՝ Ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ (այսուհետ՝ Մոնիթորինգ) 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
2. Մոնիթորինգի իրականացման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| 1) | Էդուարդ Զառանցյան | Հանձնաժողովի նախագահի խորհրդական, |
| 2) | Աշոտ Ուլիխանյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ, |
| 3) | Հայկ Ղուսալյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ, |
| 4) | Մարիամ Մոմջյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ, |

| | | |
|---|---|---|
| 5) | Արտյոմ Ղազարյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, |
| 6) | Օլեգ Գևորգյան | Հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, |
| 7) | Կարապետ Հարությունյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, |
| 8) | Արման Դովլաթյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, |
| 9) | Էդուարդ Միիրանյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի ավագ մասնագետ, |
| 10) | Կարեն Մարկոսյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, |
| 11) | Վարդան Սարգսյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, |
| 12) | Մկրտիչ Գևորգյան | Հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի տնտեսագետ, |
| 13) | Հայկ Գևորգյան | Հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի ավագ մասնագետ, |
| 14) | Երջանիկ Գևորգյան | Հանձնաժողովի գործերի կառավարման վարչության գնումների և տնտեսական բաժնի գլխավոր տնտեսագետ: |

3. Ընդունել ի գիտություն, որ Մոնիթորինգի աշխատանքներին կներգրավվեն նաև՝
   1) Ջրային կոմիտեի 2021 թվականի օգոստոսի 20-ի №01/16/3436-2021 գրությամբ նշված անձինք՝ համաձայն հավելվածի,
   2) սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների ներկայացուցիչները՝ վերջիններիս համաձայնությամբ:
4. Մոնիթորինգի համակարգումը վերապահել Հանձնաժողովի անդամներ Կամո Սարգսյանին և Սերգեյ Աղինյանին:

**Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**



Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118